ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի փետրվարի 27-ից մինչև մարտի 1-ը

Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը

Վահագն Լալայան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ներդրումների ներգրավման և համակարգման վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ռուսաստանի Դաշնություն Մոսկվա քաղաք 2018 թվականի փետրվարի 27-ից մինչև մարտի 1-ը

4. Հրավիրող կողմը

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 130 որոշման 7.1.11 ենթակետով սահմանված սակագնային արտոնությունների կիրառման կարգի նախագծի քննարկմանը:

6. Քննարկված թեմաները

Քննարկվել է Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 130 որոշման 7.1.11 ենթակետով սահմանված սակագնային արտոնությունների կիրառման կարգի նախագիծը, մասնավորապես հայտերի ներկայացման, գնահատման, շրջանառման, պետությունների կողմից համաձայնեցման ընթացակարգերը, ինչպես նաև ժամկետները:

7. Հանդիպումները, ելույթները, քննարկված հարցերը

Նախագծի շուրջ քննարկումներին մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ներկայացուցիչները:
Քննարկումների ընթացքում ներկայացվել են անդամ պետությունների դիրքորոշումները և տարաձայնությունները նախագծի վերաբերյալ: Հայկական կողմը վերստին ներկայացրել է իր դիրքորոշումը քննարկման ընթացքում, որով ևս մեկ անգամ ամրապնդել է իր դիրքորոշումը ընթացակարգն առավել պարզ, թափանցիկ և գործարարների համար ընկալելի դարձնելու առնչությամբ, գործարար միջավայրի բարելավմանը չխոչընդոտելու նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշում է կայացվել ևս մեկ անգամ անցկացնել ներքին քննարկումներ՝ տարաձայնությունները վերացնելու նպատակով:
Քննարկումների արդյունքում որոշում է կայացվել ս.թ. մարտի 14-ին տեսակոնֆերանսի միջոցով անցկացնել քննարկումների հաջորդ փուլը:
Կողմերի միջև ընդհանուր հայտարարի չգալու դեպքում հարցը քննարկվելու է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդում:

9. Գործուղվողը՝

Վահագն Լալայան

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

06.03.2018թ.